

ԴԱՍԸՆԹԱՑԱՎԱՐՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՐԱՎԵՐ

TRAINING OF TRAINERS

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ԽԱՂԱՂԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

13 հունիս, 2019

Դիմումների վերջնաժամկետ՝ **հունիսի 5, 2019:**

Մասնակիցների ընտրության վերջնաժամկետ՝ **հունիսի 20, 2019:**

«Խաղաղ փոփոխությունների նախաձեռնություն» (Peaceful Change initiative, PCI) միջազգային հասարակական կազմակերպությունը (Միացյալ Թագավորություն), «Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համատեղ իրականացնում է «Հայաստանում երիտասարդների մասնակցությունը որոշումների կայացման եւ խաղաղարարության գործում» վերնագրով ծրագիր՝ Միացյալ Թագավորության կառավարության «Կոնֆլիկտների, կայունության եւ անվտանգության հիմնադրամի» աջակցությամբ:

Ծրագիրն ունի երկու հիմնական բաղադրիչ՝

- որակական հետազոտություն՝ բացահայտելու երիտասարդների պատկերացումներն ու ակնկալիքները «նոր Հայաստանում» որոշումների կայացման եւ խաղաղարարության բնագավառներում նրանց մասնակցության վերաբերյալ,
- ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 2250 բանաձեւի շուրջ վերապատրաստման դասընթաց Տավուշի մարզի երիտասարդության համար:

«Խաղաղ փոփոխությունների նախաձեռնություն» հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2012 թվականին, Մերձավոր Արեւելքում եւ Հյուսիսային Աֆրիկայում տեղի ունեցած ապստամբություններից անմիջապես հետո՝ այդ հասարակությունների առջև ծառայած մարտահրավերներին խաղաղ արձագանքելու ձգտումով: Կազմակերպության հիմնական մոտեցումներն են՝

- աջակցել հասարակություններին կոնֆլիկտների կառավարման առավել արդյունավետ, ոչ-բռնի միջոցների բացահայտման եւ կիրառման ուղղությամբ՝ երկխոսության, ներգրավման եւ համագործակցության հմտությունների եւ հնարավորությունների կառուցման միջոցով,

- տեղական, ազգային եւ միջազգային մակարդակներում բռնության հետեւանքները մեղմելու ուղղությամբ մարդկանց կյանքի որակի ամրապնդում՝ երկարաժամկետ եւ կայուն խաղաղության տեսլականի հիման վրա,
- աջակցել խաղաղարարությամբ զբաղվող տեղական գործիչներին եւ հասարակական կառույցներին՝ ամրապնդելու նրանց մոտ միջնորդության, արդյունավետ բանակցությունների եւ հաշտեցման գիտելիքներն ու հմտությունները:

«Դիվիզանի երիտասարդների համագործակցության կենտրոն», ԴԵՅԿ, հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2008 թ-ին Տավուշի մարզի Դիվիզան քաղաքում, սակայն ակտիվ գործունեություն է ծավալում ոչ միայն Տավուշի մարզում, այլ նաև Հայաստանի հյուսիսային մարզերում և Երևան քաղաքում: Կազմակերպության թիրախային խումբ են հանդիսանում 13-30 տարեկան, գյուղական /ոչ քաղաքային/ համայնքներում բնակվող երիտասարդները, որոնք ունեն տարբեր կրթական, սոցիալական, ընտանեկան ու մասնագիտական որակներ: Կազմակերպության առաքելությունն է նպաստել համայնքի զարգացմանը երիտասարդ կանանց և տղամարդկանց կարողունակությունների զարգացման ու զբաղվածության ապահովման միջոցով:

ԴԱՍԸՆԹԱՑԱՎԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ (ToT) ՄԱՍԻՆ

Վերոնշյալ ծրագրի շրջանակներում PCi-ն ու ԴԵՅԿ-ը կազմակերպում են դասընթացավարների վերապատրաստման դասընթաց (ToT) «Երիտասարդների մասնակցությունը որոշումների կայացման եւ խաղաղարարության ոլորտներում» թեմայով: Դասընթացը կիրականացվի անգլերեն կամ ռուսերեն լեզուներով *(կախված ընտրված դիմորդների նախապատվությունից)*: Այն նախատեսված է **օգոստոսի 11-ից 16-ը** Դիվիզանում: Դասընթացը նախատեսված է Հայաստանում երիտասարդական աշխատանքի ոլորտում փորձ ունեցող անձանց համար, որի արդյունքում դասընթացավարները ձեռք կբերեն վերապատրաստման անհրաժեշտ գիտելիքներ եւ հմտություններ: Դասընթացի մոդուլները պատրաստվել են PCi-ի եւ ԴԵՅԿ-ի ջանքերով եւ հիմնված են ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 2250 բանաձեւի վրա: Բանաձեւը կոչ է անում ՄԱԿ-ի անդամ պետություններին ստեղծել հնարավորություններ երիտասարդների համար՝ մասնակցելու իրենց հասարակություններում որոշումների կայացման եւ խաղաղության կառուցման գործընթացներին: Դասընթացի մոդուլները ներառում են ինչպես կոնֆլիկտների կառավարման միջազգային փորձի վերաբերյալ նյութեր, այնպես էլ հայաստանյան իրականությանը հարմարեցված բաժիններ, մասնավորապես՝ կոնֆլիկտի եւ խաղաղության հասկացությունների, կոնֆլիկտների տարնսֆորմացիայի եւ խաղաղարարության, երիտասարդության եւ երիտասարդների մասնակցության, ՄԱԿ ԱԽ-ի 2250-ի եւ այլ թեմաների շուրջ:

Վերապատրաստման դասընթացին կմասնակցեն 15 հոգի, ովքեր ունեն երիտասարդական աշխատանքի, ուսուցչության կամ վերապատրաստման

դասընթացների մասնակցության փորձ: Վերապատրաստման դասընթացին մասնակցած **15 հոգուց** կընտրվեն **6 լավագույն մասնակիցները**՝ Տավուշի մարզի երեք երիտասարդական համայնքներում՝ Նոյեմբերյանում, Իջեւանում եւ Դիլիջանում հետագայում դասընթացներ վարելու համար: Երեք համայնքներից յուրաքանչյուրում կկազմակերպվի չորս սեմինար (ըստ պատրաստված մոդուլներ թվի): Սեմինարները կկազմակերպվեն 2019 թ. աշնանը ԴԵՅԿ-ի կողմից: Սեմինարները կվարեն ընտրված 6 մասնակիցները, որոնք կաշխատեն զույգերով յուրաքանչյուր 3 համայնքում: Սեմինարներն անցկացնելուց բացի, դասընթացավարները պետք է դասընթացի մասնակիցների հետ միասին աշխատեն մոդուլների վրա՝ դրանք հայաստանյան կոնտեքստին էլ ավելի հարամրացնելու նպատակով:

PCi-ն ու ԴԵՅԿ-ը կընտրեն դասընթացավարների վերապատրաստման դասընթացի (ToT) մասնակցինների հայտադիմումների եւ հարցազրույցների (անմիջական կամ հեռակա) միջոցով: Վերապատրաստման դասընթացի բոլոր 15 մասնակիցների ծախսերը, ներառյալ տրանսպորտ, սնունդ եւ կացություն, կհոգան կազմակերպիչները: Իսկ սեմինարների իրականացման համար ընտրված 6 դասընթացավարներին կտրամադրվի համեստ վարձատրություն:

ԴԱՍԸՆԹԱՑԱՎԱՐՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ (TOT) ԴԻՄՈՒՄՈՐԴՆԵՐԻ ԱՆՋՐԱԺԵՇՏ ՈՐԱԿՆԵՐ

Դիմորդները պետք է.

- ունենան առնվազն 4-5 տարվա աշխատանքի փորձ հանրային ոլորտում կամ հասարակական կազմակերպություններում, այդ թվում, երիտասարդական, խաղաղարարական, մարդու իրավունքների, կրթական, միջազգային հարաբերությունների, կոնֆլիկտների տրանսֆորմացիայի, քաղաքական գիտությունների, տնտեսագիտության եւ այլ ոլորտների
- ծանոթ լինեն ինտերակտիվ ուսուցման մեթոդաբանության սկզբունքներին
- լավ տիրապետեն անգլերեն կամ ռուսերեն լեզուներին
- ունենան թիմային աշխատանքի մասին գիտելիքներ
- լինեն պատասխանատու եւ կարգապահ
- լինեն մատչելի 2019թ-ի աշնան ամիսների ընթացքում Տավուշի մարզում 4 անգամ սեմինարներ կազմակերպելու համար:

ՋԱՅՏԱԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳ

Դիմելու համար խնդրում ենք ուղարկել ձեր ինքնակենսագրականը (CV) եւ մասկանկցության հետաքրքրությունը հիմնավորող նամակ հետեւյալ էլեկտրոնային հասցեով՝ artur.ghazaryan@yccd.am

Նամակի վերնագրի դաշտում խնդրում ենք նշել «Դասընթացավարների վերապատրաստում» կամ “ToT in Governance and Peacebuilding”.

Մասկանկցության հետաքրքրությունը հիմնավորող նամակը պետք է լինի առավելագույնը 500 բառ եւ ներառի դասընթացի թեմայի շուրջ ձեր փորձը եւ

հետաքրքրությունը, ինչպես նաև նախկինում վերապատրաստման դասընթացների ձեր մասնակցության փորձը:

Չարցազրույցների մասնակցելու համար կտեղեկացվեն միայն հայտադիմումների փուլն անցած դիմորդները: